

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔ

08.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը մասնակցել է մարզի Ֆանտան համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին սրբավայրում կազմակերպված ծիսական տոնակատարությանը:

Համայնքային այս տոնի առթիվ տեղի ունեցած միջոցառման շրջանակներում Կոտայքի մարզպետը ողջունել և շնորհավորել է Ֆանտանի բնակիչներին, գրուցել նրանց հետ՝ քննարկելով համայնքի զարգացման հեռանկարների ուղղությամբ ազգաբնակչության շրջանում առկա տեսակետներն ու դիրքորոշումները:

Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը Ֆանտան համայնքի ղեկավարի ուղեկցությամբ շրջայց է կատարել համայնքում, տեղում ծանոթացել է համայնքային ենթակառուցվածքների գործունեությանը՝ անդրադարձ կատարելով վերջիններիս արդյունավետության բարձրացմանը վերաբերող տարբեր հարցերի:

Ֆանտան համայնք կատարած այցելության շրջանակներում Կոտայքի մարզպետին ներկայացվել են նաև համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումների ընթացքը, առաջիկայում նախատեսվող անելիքները, ինչպես նաև համայնքային բյուջեի ընթացիկ ցուցանիշները:

Ամփոփելով այցելության արդյունքները՝ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը կարևորել է համայնքի հոգևոր-մշակութային առօրյա աշխուժացմանը միտված նախաձեռնությունների շարունակականությունը, ինչպես նաև համայնքային տարբեր ոլորտներում համակողմանի և հետևողական գործընթացների իրականացման անհրաժեշտությունը: